ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինսախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 033

N _____

<<_____>> _____20 թ.

20.12.19թ. թիվ 01.1/26-1/21153-2019

«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԶԱԴՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զադոյան

2019 թվականի ընթացքում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի շրջանակներում ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների նկատմամբ էներգաարդյունավետության պահանջների կիրառման ուղեցույցը, ինչպես նաև գնումների բնագավառում առկա խնդիրների լուծմանն ուղղված մի շարք առաջարկություններ:

Հայտնում ենք, որ հիշյալ առաջարկությունները և ուղեցույցը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացվել են ՀՀ պետական կառավարման մարմինների քննարկմանը, որի արդյունքում ընդունելի համարված առաջարկները ներառվել են ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի փաթեթում (ամփոփաթերթը կցվում է): Ընդ որում, նշված նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 02.11.2019թ.)

Միաժամանակ հայտնում ենք, որ ասոցիացիայից ստացված էներգաարդյունավետության պահանջների կիրառման ուղեցույցը և վերջինիս վերաբերյալ

ստացված կարծիքների հիման վրա կազմված ամփոփաթերթը ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ ապահովելու ՀՀ վարչապետի հանձնարարականը ՀՀ պետական կառավարման մարմիններին՝ իրենց և ենթակա կազմակերպությունների կարիքների համար իրականացվող գնումներում էներգաարդյունավետության պահանջները կիրառելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատ.՝ Հ. Ջաղինյան
Գնումների քաղաքականության վարչություն
011 800 258